

Հայ գրականության հանրապետական օլիմպիադա

2019-2020 ուստարի

Օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

IX դասարան

1. Հայ գրականության մեծ երախտավոր, XIX դարավերջի երիտասարդության պաշտամունք ու հայրենասիրության անկրկնելի թարգնամ Ռաֆայել Պատկանյանը սերում էր ժամանակի ամենանշանավոր Պատկանյանների տոհմից, որոնք հայ հասարակական ու գրական կյանքում զբաղեցնում էին անգնահատելի տեղ: Պատկանյանը թոռն էր նշանավոր Սերովբե վարժապետի, ով իր ժողովրդական ու հայրենասիրական երգերով դաստիարակում էր Նոր Նախիջևանի երիտասարդությանը, նա որդին էր նշանավոր Գաբրիել քահանայի, որ նաև բանաստեղծ էր, և որը դարձել էր նաև նրա մեծագույն ուսուցիչը՝ մանուկ Ռաֆայելին ուղղորդելով դեպի գրականություն: Նա կրթվել ու հասակ է առել իր հորեղբոր՝ թատերագիր Միքայել Պատկանյանի ազգասիրական գաղափարներով: Մտանալով լավագույն կրթություն (Գաբրիել Պատկանյանի դպրոց, Լազարյան ճեմարան, Դորպատի համալսարան, Մոսկվայի համալսարան, Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժին, որն ավարտելով՝ ստանում է արևելյան լեզուների թեկնածուի գիտական աստիճան)՝ Պատկանյանը իր ամբողջ կյանքում անմնացորդ ծառայեց իր հայրենիքին, ժողովրդին՝ հարստացնելով հայ գրականությունը անկրկնելի ստեղծագործություններով: Մոսկվայի համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետի դասախոսություններին հաճախելիս իր ուսանող ընկերների՝ Գևորգ Քանանյանի և Մնացական Թիմուրյանի հետ հիմնում է գրական ընկերություն, որը երեք ընկերների անունների առաջին տառերից և ազգանունների առաջին վանկերից կազմված հասկանալի անվանվում է «Գամառ- Քաթիպա»: Այս հասկանալի հետագայում դառնում է Ռաֆայել Պատկանյանի գրական ծածկանունը: «Գամառ -Քաթիպա» ընկերությունը զբաղվում էր հրատարակչությամբ. Հենց այս ընկերության հրատարակած պրակներից մեկում էլ լույս է տեսնում «Արաքսի արտասունքը» սքանչելի բանաստեղծությունը (1855-57թ.թ.): Այս բանաստեղծությանը հետևում է Պատկանյանի հայրենասիրական երգերի շարքը, որը 1878-ին լույս է տեսնում «Ազատ երգեր» խորագրով: Բերված քառատողը Պատկանյանի «Արաքսի արտասունքը» բանաստեղծությունից է: Այն գրվել է անձնավորման սկզբունքով: Անձնավորումը գրական պակերավորման միջոցներից է, երբ անշունչ առարկաներին, կենդանիներին, երևույթներին վերագրվում են մարդկային հատկանիշներ: Անձնավորումը փոխաբերության դրսևորումներից է և մոտ է այլաբանությանը: Արաքսը՝ պատմական Երասխը, հայերիս մայր գետն է, մեր սրբությունը, մեր պատմության մշտավկան: Արաքսի ալիքներում հյուսվել են մեր հաղթանակների երգերը և պարտությունների սգերգերը: Այսօր էլ Արաքսը հառաչանքով հոսում է մեր հայրենիքը դավադրորեն բաժանող սահմանով և տխուր շարական երգելով՝ սպասում իր պանդուխտ զավակների նիր վերադարձին: Պատկանյանի բանաստեղծության խիզախ պատանին ուզում է իմանալ Արաքսի դառնագին վշտի պատճառը՝ ինչու է պղտոր, սգավոր, լալագին և ստանում է Արաքսի խորագին դառնությամբ ասված խորհմաստ պատասխանը, որը նաև պատգամ է գալիք սերունդներին՝ վերադարձնել Արաքսի վաղեմի փառքը, վերականգնել մեր երբեմնի հզոր հայրենիքը, որտեղ Աստված գետեղել է եղեմական դրախտը, չլքել մեր նախնիների փառքով ու հերոսությամբ ներծծված հողը, վերադառնալ և կրկնել Ավարայրն ու Սարդարապատը, Արցախյան անկրկնելի ազատամարտը: Արաքսը մեզ պարտավորեցնում է իրականություն դարձնել «Հայաստան, երկիր դրախտավայր» տեսլականը: Այս բանաստեղծությունը 175 տարի ապրում ու ապրեցնում է մեզ այն երգի է վերածել նշանավոր երաժիշտ Պ. Աֆրիկյանը:

2. Գաբրիել Մուղուկյանը հայ թատրոնի և թատերգության անփոխարինելի այն տաղանդներից է, որն իր կատակերգություններով անմահացրեց մեր ժողովրդի մի հատվածի՝ թիֆլիսահայերի բարքերն ու սովորությունները: Մակայն Մուղուկյանի անմահ ստեղծագործությունը իր տաղանդի շնորհիվ դուրս է եկել նեղ ազգային- սոցիալական շրջանակից և դարձել բոլոր ժամանակների սեփականությունը:

Մունդուկյանը անգնահատելի դեր է խաղացել Չմշկյան- Աֆրիկյան թատերախմբի և հայ թատրոնի կազմավորման ու զարգացման գործում:

Մունդուկյանը «Պեպո» կատակերգությունը գրել է 1871-ին, այն առաջին անգամ խաղացվել է Թիֆլիսի հայ թատրոնի բեմում: Պեպոյի դերակատարը եղել է տաղանդավոր դերասան Գևորգ Չմշկյանը, որը մասնակցել է նաև կատակերգության ստեղծման ողջ ընթացքին: Պիեսը կատակերգություն է կոչել Մունդուկյանը, սակայն այն իրական կյանքի մի դրամա է, ուր ծիծաղելին միայն անուղղակի է երևում (Զինգիմովը Պեպոյի տանը): Պիեսը գրված է իրապաշտական ուղղության բոլոր կանոններով. ունեցրեց հարուստ և խաբված, ազնիվ աշխատանքը փառաբանող ձկնորս, որ հավատում է արդարության հաղթանակին: Ճակատագրի չար խաղով Պեպոն հայտնվել է անելանելի վիճակում, նա խայտառակվելու վտանգի առջև է (քրոջ՝ Կեկելի ամուսնության հարցով). Զինգիմովը, իմանալով, որ բարաթը չկա, հրաժարվում է վերադարձնել իրեն ի պահ տրված 1000 ռուբլին և ծաղրում է Պեպոյին, երբ վերջինս նրան հիշեցնում է խղճի, հոգու գրված մատյանի մասին. «Բաս քու սրտի դավթըրումն էլ վո՛ւնչին չկա գրա՞ծ», «Մրտի դավթարը վո՛ւրն է»:

Ազնիվ ձկնորսը պարտվում է ծախու դատարանում. Փողի այլատերող ուժը հաղթում է արդարությանը և Պեպոյին մնում է միայն բարոյական հաղթանակը, նա աշխատավոր ժողովրդի առջև համարձակորեն պատռում է հասարակության ու կառավարության մեջ դիրք ու «հարգանք» ունեցող հարստահարողի դիմակը, արթնացնում է արդարության համար պայքարի կամքը:

Այսօր էլ, իհարկե, կան պեպոներ ու զինգիմովներ, կան անհատ մարդկանց ու բանկերի տոկոսների տակ «շնչահեղձ» եղող մարդիկ, ովքեր չեն կարողանում վճարել պարտքերը և կորցնում են ունեցվածք ու հավատ, ովքեր սխալ հաշվարկի, երկրում տիրող անարդարության, բանկերի կամայականությունների արդյունքում լքում են մեր հայրենիքը: Իհարկե, բոլորովին տարբեր են ժամանակներն ու հանգամանքները, հիմա ամեն ինչ արվում է «օրինականության» սահմաններում, կարող ես դատարանում պաշտպանել քո իրավունքները, կարող ես հաղթել, բայց բոլոր խաբված մարդիկ իրենց հոգու խորքում համոզված են, որ իրենք նորոյա Պեպոներ են: Համոզված ենք, որ շատ մոտ է այն օրը, երբ մեր երկրում չեն լինի խաբողներ ու խաբվածներ, քանի որ Մունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի բակում կանգնեցված Պեպոյի արձանը հնչեցնում է արդարության կոչը: Իր մահից առաջ Մունդուկյանը իր կտակում գրել է. «Գերեզմանիս վրա վուչինչ արձան հարկավոր չէ. Մե սիվ քար ու իմ ջանը:

Թե սրտով վրես արձան իք ուզում ու արժանի կու համարիք, էտ արձանը, իմ փոխանակ, Պեպոյի համա կանգնեցրե՛ք, վուրդիոր կու սազ գա:

Սաղ բոյով կանգնած ըլի բարձր պատվանդանի վրա՝ իր հաքուստով, գդակը ծածկած, մե ձեռին Արութինի բարաթը, մեկել ձեռով վրեն գրածն ըլի ցույց տալ նրան, վուր գլխաբաց ու սերթուկով սևերես կանգնած է կշտին:

Տակը՝ պատվանդանի վրա, գրած ըլի մենակ էս խոսքիբը՝
Էս քու կոտրած ձեռով չի՞ս գրի...»: Պեպո

1935-ին հայ կինոյի հիմնադիր, երախտավոր Համո Բեկնազարյանը Էկրան բարձրացրեց «Պեպո» կինոնկարը, որը այսօր էլ արդիական է ու մի նշանախեց անգամ չի կորցրել իր առաջին օրերի փառքից՝ շնորհիվ Բեկնազարյանի և գլխավոր դերակատարներ անգուգական Հրայրա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի և այլոց: Պեպոյի արձանի քանդակագործն է Գրիգոր Ահարոնյանը, ճարտարապետը՝ Մարկ գրիգորյանը:

Թումանյանը՝ Մունդուկյանի մասին. «Ու անվերջ էն մեծ Պեպոն, կյանքի բեմի վրա մաքուր, հաղթական, Զինգիմովի դեմը կանգնած՝ իր հալալ աշխատողի կոշտ ձեռքը կզարկի մուրհակին և Թիֆլիսի բարբառով կորոտա- քո սրտո՞ւմն ինչէ գրած... ու կվարի իր ազնիվ կոիվը ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար»:
Թումանյանը Մունդուկյանին անվանել է «Մեծ Պեպո»:

3. Հայ քնարերգության անկրկնելի հանճարը՝ Պետրոս Դուրյանը ծնվել է Պոլսի Սլյուտար թաղամասում, երկաթագործի համեստ վաստակով ապրող բարեպաշտ ընտանիքում:
Դուրյանն է իր տոհմական անբարեհունչ ազգանվան ստուգաբանության հեղինակը՝ Զմպայանը փոխարինելով հայկական Դուրյանով: Սլյուտարի ճեմարանում նա վայելել է իր ուսուցիչներ Հակոբ Պարոնյանի և Մրապիոն Թոլյանի հովանավորությունն ու խնամքը: Ընտանեկան դրությունը

բարելավելու նպատակով նա աշխատում է լուսայափոխի քարտուղար, տնային ուսուցիչ, բայց, ամենուր հանդիպելով անարդարության, մեկընդմիջտ նվիրվում է բանաստեղծությանն ու թատերգությանը՝ Վարդույանի թատրոնում կատարելով զանազան դերեր՝ ճանաչվելով զգայուն ու գնահատված դերասան:

Դուրյանի գրական ժառանգությունը հարուստ չէ, ինչպես հարուստ չէ նրա կենսագրությունը: Իր 21-ամյա կյանքի ընթացքում նա գրեց 40-ին մոտ բանաստեղծություններ, 10-ը թատերգություն, 13 նամակ: Բայց նա դարձավ «մեր քնարերգության Վահագնը» (Պարույր Սևակ) և «Սկյուտարի սոխակ» իր անգուզական բանաստեղծություններով:

Ստորև բերված վեցնյակի հեղինակը մեր մյուս հրաշքն է՝ Միսաք Մեծարենցը:

Դուրյանը երգիչն է հայրենիքի, բնության, սիրո, ցավի և մահվան. Նրա երգերը հյուսվել են ինքնաբուխ, հրայրքով ու տառապանքով: Հյուսված տառապող բանաստեղծը իր ցավն է համարում իր հայրենիքին չօգնած մեռնելը. աննշան ու մոռացված լինելը նա ցավ չի համարում, «ժրպտե, գեղե, հուրե շաղյալ փունջ մը էակ» չգրկած մեռնելը ցավ չէ իր համար, հողե վերմակի տակ ննջելը ցավ չէ իր համար, բայց անդառնալի ցավ է՝ չեզ մարդկության մեկ ուսուր գոս՝

Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Չ'օգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛վ ինձ համար:

Հանճարեղ պատանին սարսափում է ժամանակի ավերիչ ուժից, իր հայրենիքի հանիրավի մոռացությունից, նա իր ազգային ցավին տալիս է համամարդկային բովանդակություն, բայց նաև քաջ գիտե իր թողածի արժեքը:

Իսկ քո Դուրյանին նկարագրի՛ր ինքդ՝ 5-7 նախադասությամբ:

4.Տողերի հեղինակը հանճարեղ ՉԱՐԵՆՑՆ է. այն նվիրված է Հայաստանի վերքի երգիչ Խաչատուր Աբովյանին: Բերված հատվածը «Դեպի լյառը Մասիս» պոեմից է:

:Աբովյանը հետագա սերունդներին, հատկապես երիտասարդներին, պատգամել է. «Մեկ ազգի պահողն էլ լեզուն և ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վա՛յն էկել և մեր օրին»:

«Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբա՛ն. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք»:

«Էրեխե՛ք, ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին դուրբան. Հողումն էլ ըլիմ, էկե՛ք, վրես կանգնեցեք, թե հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցեք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու լսեցե՛ք ձեր ընկերների լացն ու սուգը, նրանց հորնըմոր կսկիծն ու ձեր հորնըմոր ծոցումը դինջ հանգստանալիս՝ ասածներս մտքըներդ բերեք»:

«Մասիսը միշտ իմ դիմաց էր, որ մատնացույց էր անում, թե ի՞նչ աշխարհի ծնունդ եմ. Հայկը, Վարդանը, Տրդատը, Լուսավորիչը՝ քնած ժամանակ նույնիսկ ասում էին ինձ, որ ես իրենց որդին եմ: Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդադար ձայնում էին, թե Հայկի զավակն եմ, Նոյի թոռը, Էջմիածնի որդին, Դրախտի բնակիչը»:

Ուրեմն՝ այսօր էլ արդիական են Աբովյանի դասերը, և այդ դասերը յուրացնելու հերթը քոնն է, սիրելի՛ աշակերտ:

Հայ գրականության հանրապետական օլիմպիադա
2019-2020 ուստարի

Գնահատման չափանիշներ

IX դասարան

1.1- ին հարց. 1-ին ենթահարց՝ 1մ, 2-րդ ենթահարց՝ 0,5 մ., 3-րդ ենթահարց՝ 1 մ., 4-րդ ենթահարց՝ 1 մ., 5-րդ ենթահարց՝ 1,5միավոր:

2-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 1,5 մ., 2-րդ ենթահարց՝ 1,5մ., 3-րդ և 4 -րդ ենթահարցերը՝ 0,5-ական միավոր:

3-րդ հարց. 1-ին և 2-րդ ենթահարցերը՝ 1մ, 2-րդ և 3-րդ ենթահարցերը՝ 1,5-ական մ.:

4-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարց՝ 4միավոր: